



Support for Improvement in Governance and Management

A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU

Կարճ գրություն 8

Հունվար 2011

Պետական Գնումներ

Շնորհման չափորոշիչների սահմանումը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ընդհանուր համատեքստ: հավասար վերաբերմունք, խտրականության արգելք, թափանցիկություն
- Ամենացածր գնի չափորոշիչի կիրառումը
- Տնտեսապես ամենաշահավետ մրցութային հայտի նույնականացման համար օգտագործվող մեթոդները
- Կիրառվելիք շնորհման չափորոշիչներին վերաբերող ընդհանուր ռազմավարության սահմանումը. ստուգացուցակը



www.sigmaweb.org

This document has been produced with the financial assistance of the European Union. The views expressed herein can in no way be taken to reflect the official opinion of the European Union, and do not necessarily reflect the views of the OECD and its member countries or of beneficiary countries participating in the SIGMA programme.

Շնորհման չափորոշիչներն այն չափորոշիչներն են, որոնք կազմում են հիմքը, որի վրա պետական պատվիրատուն ընտրում է լավագույն հայտը և շնորհում է պայմանագիրը: Այս չափորոշիչները պետք է սահմանվեն պետական պատվիրատուի կողմից նախօրոք և չպետք է վնասեն արդար մրցակցությանը:

Հրահանգը սահմանափակում է այն չափորոշիչները, որոնք պետական պատվիրատուն կարող է կիրառել՝ պայմանագրի շնորհման համար

- ամենացածր գնի չափորոշիչը կամ
- տնտեսապես ամենաշահավետ հայտի (SUՄՀ) չափորոշիչը, որը նշանակում է գնից բացի կիրառել ոչ գնային այլ չափորոշիչներ:

Հրահանգը սահմանում է ընդհանուր կանոններ՝ կապված հատուկ չափորոշիչների սահմանման հետ, որոնք կարող են կիրառվել, երբ օգտագործվում է SUՄՀ չափորոշիչը և այն նաև սահմանում է այս չափորոշիչներին վերաբերող բացահայտման պարտականությունը: Համայնքի օրենսդրի հիմնական նպատակը կոչված է ապահովելում, որ ներհամայնքային առևտուրը սահմանափակված չլինի շնորհման խտրական չափորոշիչներով:

Շնորհման փուլում պետական պատվիրատուն պետք է գործի հաշվի առնելով իրավունքի ընդհանուր և Պայմանագրի սկզբունքները, մասնավորապես ապահովելով:

Հավասար վերաբերմունքը և խտրականության սրգելք, որը նշանակում է, որ շնորհման չափորոշիչները պետք է լինեն ոչ խտրական և չպետք է վնասեն արդար մրցակցությանը:

Թափանցիկությունը, որը նշանակում է, որ շնորհման չափորոշիչները պետք է սահմանվեն նախօրոք և պատշաճ կերպով հասանելի լինեն մասնակիցներին: Կիրառվելիք շնորհման չափորոշիչների սահմանման և հասանելիության ապահովման պատակն է, ապահովել, որ

- մասնակիցները կարողանան պատրաստել իրենց հայտերն ավելի պատշաճ ձևով՝ փորձելով լավագույն ձևով բավարարել պետական պատվիրատուի սահմանած առաջնայնությունները
- հայտերի գնահատումն իրականացվի պետական պատվիրատուի կողմից թափանցիկ և հուսալի եղանակով և հնարավորինս օբյեկտիվորեն;
- համապատասխան շահագրգիռ անձիք, օրինակ, աուդիտի մարմինները, վերանայման մարմինները, կառավարական այլ մարմինները կամ մասնակիցները կարողանան հետևել գործընթացին, որպեսզի կանխեն խտրականության կամ շնորհման չթույլատրված չափորոշիչների կիրառումը:

Ամենացածր գնի չափորոշիչի և SUՄՀ չափորոշիչի միջև ընտրությունը հիմնականում թողնվում է պետական պատվիրատուի հայեցողությանը՝ բացառությամբ մրցակցային երկխոսության ընթացակարգի, կամ երբ պետական պատվիրատուն ընդունում է տարբերակներ, որոնց դեպքում պետք է օգտագործվի SUՄՀ չափորոշիչը:

Պայմանագրի ծանուցում պահանջող գնումների ընթացակարգերում պետական պատվիրատուն պետք է հայտարարի, թե արդյոք այն կիրառելիում է ամենացածր գնի չափորոշիչը, թե SUՄՀ չափորոշիչը:

Ի՞նչ է նշանակում ամենացածր գնի չափորոշիչը կիրառելը:

Երբ պետական պատվիրատուն ընտրում է կիրառել ամենացածր գնի չափորոշիչը, պայմանագիրը շնորհվում է այն մասնակցին, որը առաջարկում է ամենացածր գինը: Գինը միակ գործոնն է, որը հաշվի է առնվում հայտը ընտրելիս: Ստացված հայտերը գնահատվում են սահմանված տեխնիկական առաջարկների հետ համեմատելու միջոցով՝ բավարարում է կամ չի բավարարում սկզբունքով: Ո՛չ գնային վերլուծությունը և ո՛չ որակի հաշվի առնելը չեն կարող դեր խաղալ այս ընտրության մեջ:

Ամենացածր գնի չափորոշիչի սահմանափակումները: Ամենացածր գնի չափորոշիչն ունի պարզության և արագության առավելությունը, բայց այն ներկայացնում է որոշ սահմանափակումներ, ներառյալ հետևյալները.

- Այն չի թույլատրում պետական պատվիրատուին, բացառությամբ տեխնիկական առաջարկով սահմանված որակի գործոններից, հաշվի առնել որակի այլ գործոններ ևս.
- Այն չի թույլատրում պետական պատվիրատուին հաշվի առնել նորարարությունը և նորարար լուծումները: Սահմանված տեխնիկական առաջարկներին բավարարող հայտերը գնահատվում են որպես համապատասխանող:
- Պահանջների համար, որոնք ունեն շահագործման երկար ժամկետներ, չի թույլատրում պետական պատվիրատուին հաշվի առնել պահանջի շահագործման ընթացքում առաջացող սպասարկման արժեքը: Երբ օգտագործվում է ամենացածր գնի չափորոշիչը, սահմանված տեխնիկական տեխնիկական առաջարկներում միայն գնման ուղղակի արժեքը կամ գնման սկզբնական արժեքը կարող է հաշվի առնվել:

Ի՞նչ է նշանակում SUՄՀ չափորոշիչի կիրառումը:

Երբ օգտագործվում է տնտեսապես ամենաշահավետ հայտի (SUՄՀ) չափորոշիչը, պետական պատվիրատուն կարող է գնից բացի հաշվի առնել ոչ գնային այլ չափորոշիչներ, ինչպիսիք են որակը, մատակարարման ժամկետները և երաշխիքային ժամկետը: Յուրաքանչյուր ընտրված չափորոշիչին տրվում է համեմատական կշիռ պետական պատվիրատուի կողմից, որն արտացոլում է դրա ունեցած համեմատական կարևորությունը: SUՄՀ չափորոշիչի նպատակն է որոշել այն հայտը, որն առաջարկել է գնի և որակի լավագույն հարաբերակցությունը:

Գնի և որակի հարաբերակցությունը: Գնի և որակի հարաբերակցություն տերմինը նշանակում է գնի հետ կապված և գնի հետ չկապված զանազան չափորոշիչների միջև ամենաբարենպաստ համակցությունը, որոնք միասին բավարարում են պետական պատվիրատուի պահանջները: Այնուամենայնիվ, տարբերը, որոնք

կազմում են այս զանազան չափորոշիչների ամենաբարենպաստ համակցությունը տարբեր են կախված են պետական պատվիրատուի կողմից պահանջվող արդյունքներից՝ գնումների տվյալ գործընթացի համար:

Գնի և որակի հարաբերակցության հասկացությունը ընդունում է, որ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները համասեռ չեն, և որ դրանք տարբերվում են որակով, դիմացկունությամբ, երկարակեցությամբ, հասանելիությամբ և մատակարարման այլ պայմաններով: Գնի և որակի հարաբերակցության ձգտելու նպատակն այն է, որ պետական պատվիրատուն պետք է նպատակ ունենա՝ ձեռք բերելու իր կարիքները բավարարող հատկանիշների ամենաբարենպաստ համակցությունը: Հետևաբար, տարբեր որակները, ինչպիսիք են, օրինակ, առաջարկվող զանազան արտադրանքների իրական գները, երկարակեցությունը և դիմացկունությունը, չափվում է դրա գնի համեմատ: Կարող է նախընտրելի լինել ավել վճարել արտադրանքի համար, որն ունի պահպանման ցածր գին, քան էժան արտադրանքի համար, որն ունի պահպանման բարձր գին:

SUՄՀ չափորոշիչի առավելությունները: SUՄՀ չափորոշիչը, ի հակադրություն ամենացածր գնի չափորոշիչի, ներկայացնում է մի շարք առավելություններ, ներառյալ՝ մասնավորապես հետևյալը.

- Այն թույլատրում է պետական պատվիրատուին հաշվի առնել որակական գործոնները: SUՄՀ չափորոշիչը սովորաբար օգտագործվում է, երբ որակը կարևոր է պետական պատվիրատուի համար:
- Այն թույլատրում է պետական պատվիրատուին հաշվի առնել նորարարությունը և նորարար լուծումները: Սա, մասնավորապես, կարևոր է փոքր և միջին ձեռնարկությունների համար (ՓՄՁ-ներ), որոնք նորարարության և կարևոր ուսումնասիրությունների ու զարգացման գործունեության աղբյուր են:
- Շահագործման երկար ժամկետներ ունեցող պահանջների համար, այն թույլատրում է պետական պատվիրատուին հաշվի առնել գնվող պահանջի շահագործման ընթացքում սպասարկման արժեքը և ոչ թե միայն գնման ուղղակի գինը կամ սկզբնական գինը՝ սահմանված տեխնիկական առաջարկների շրջանակում:

Ի՞նչ չափորոշիչներ կարող են կիրառվել SUՄՀ-ն որոշելու համար:

Պետական պատվիրատուն կարող է հաշվի առնել զանազան չափորոշիչներ՝ որոշելու տնտեսապես ամենաշահավետ հայտը (SUՄՀ): Հրահանգը պարունակում է այս չափորոշիչների *նկարագրական* ցուցակը, որոնք են.

- որակը
- գինը
- տեխնիկական ցուցանիշները
- գեղագիտական և գործառնական հատկանիշները
- բնապահպանական հատկանիշները
- շահագործման արժեքը

- ծախսերը-արդյունավետությունը
- մատակարարումից հետո սպասարկումը և տեխնիկական օժանդակությունը
- մատակարարման ժամկետները:

Քանի որ ցուցակը միայն նկարագրական է, իր տեսակետից ամենաշահավետ հայտը որոշելու համար կիրառվելիք չափորոշիչների սահմանումը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դեպքի հատուկ հանգամանքները և որոշակի սահմանված սահմանափակումները, թողնված է պետական պատվիրատուին:

Շնորհման չափորոշիչները կարող են բաժանվել երկու մասի. գնի հետ կապված և գնի հետ չկապված:

Գնի հետ կապված. Գնի հետ կապված չափորոշիչներ, որոնց նաև անվանում են տնտեսական չափորոշիչներ, թույլատրում են պետական պատվիրատուին որոշել գնման առարկայի շֆինանսական արժեքը, ինչպես նաև այն օգտագործելու և գործարկելու արժեքը:

Շահագործման ժամկետի ծախսեր

Շահագործման ժամկետի ծախսերը ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների արժեքն է դրանց շահագործման ժամկետի ընթացքում: Ընդհանուր առմամբ շահագործման ծախսերը ներառում են պետական պատվիրատուի բոլոր ծախսերը, որոնք վերաբերում են.

- ձեռքբերմանը
- շահագործման ընթացքին և
- շահագործման ավարտին (ինչպես օրինակ օտարումը)

Շահագործման ժամկետի ծախսերը կարող են լինել կամ “մեկանգամյա” ծախսեր կամ “պարբերաբար կատարվող” ծախսեր: **Մեկանգամյա ծախսերն** այն ծախսերն են, որոնք վճարվում են միայն մեկ անգամ՝ գնվող պահանջի ձեռքբերման հետ, ինչպիսիք են սկզբնական գինը, գնման և տեղադրման ծախսերը, սկզբնական վերապատրաստման կամ օտարման ծախսերը: **Պարբերաբար կատարվող ծախսերն** այն ծախսերն են, որոնք վճարվում են գնվող պահանջի շահագործման ամբողջ ընթացքում: Դրանք կախված են դրանց երկարակեցությունից և սովորաբար աճում են ժամանակի ընթացքում: Պարբերաբար կատարվող ծախսերը ներառում են սպասարկման և պահպանման վճարները, վերանորոգումները, նյութերը, պահեստամասերը և էներգիայի սպառումը:

Գնի հետ չկապված. Գնի հետ չկապված չափորոշիչները վերաբերում են հիմնականում կատարման պահանջերին և տեխնիկական առաջարկին հետևելուն: Գնի հետ չկապված չափորոշիչների օրինակները ներառում են.

- **որակը-** որակի հատկանիշը, օրինակ, մեկ բոլորում տալիչի կողմից տպվող էջերի քանակը կամ դրա դիմացկունությունը

- **տեխնիկական ցուցանիշներ-** արդյոք գնման առարկան համապատասխանում է նպատակին և ինչքան լավ է այն գործում
- **գեղագիտական և գործառնական հասկանիշներ-** ինչպիսի տեսք ունի գնման առարկան և ինչքան հեշտ է այն օգտագործել
- **մատակարարման ժամկետ-** պատվերի կատարման երաշխավորած ժամկետը՝ պատվերից մինչ առաքում և աշխատանքը սահմանված վերջնաժամկետում ավարտելու ունակությունը
- **վաճառքից հետո իրականացվող սպասարկում-**ինչ աջակցություն է պահանջվում և ինչն է հասանելի պետական պատվիրատուին պայմանագրի կնքումից հետո:

Ենթաչափորոշիչներ -Պետական պատվիրատուն կարող է նաև որոշել SUՄՀ որոշելու համար ընտրված չափորոշիչները բաժանել ենթաչափորոշիչների: Ենթաչափորոշիչները մատնանշում են հատուկ գործոնները, որոնք հաշվի են առնվում պետական պատվիրատուի կողմից հատուկ չափորոշիչի շրջանակներում:

Կա՞ն արդյոք պետական պատվիրատուի հայեցողության սահմանափակումներ, երբ սահմանվում են SUՄՀ-ն որոշելու համար կիրառվելիք չափորոշիչները:

Հրահանգը անդրադառնում է տնտեսապես ամենաշահավետ հայտին “պետական պատվիրատուի տեսանկյունից”, այսպիսով, շեշտը դնելով կիրառվելիք չափորոշիչների ընտրության հարցում պետական պատվիրատուի հայեցողության վրա: Այնուամենայնիվ, այս հայեցողությունը անսահմանափակ չէ և ունի որոշ սահմանափակումներ.

- Ընտրված չափորոշիչները պետք է կապված լինեն տվյալ գնման առարկայի հետ:
- Ընտրված չափորոշիչները պետք է նպատակաուղղված լինեն որոշելու տնտեսապես ամենաշահավետ հայտը և դրանք չեն կարող ուղղված լինել այլ նպատակների:
- Ընտրված չափորոշիչները պետք է լինեն օբյեկտիվ և օբյեկտիվորեն չափվող:

Երաշխավորելու համար կիրառվելիք չափորոշիչների օբյեկտիվությունը և կանխելու պետական պատվիրատուին վստահված ընտրության իրավունքի անսահմանափակ ազատությունը, այս չափորոշիչները պետք է ձևակերպվեն հստակ և հնարավորինս լինեն ավելի: Մասնակիցները պետք է հնարավորություն ունենան պատրաստել իրենց հայտերը՝ հաշվի առնելով այն եղանակը, որով իրականացվելու է հայտերի գնահատումը:

SUՄՀ չափորոշիչը և պայմանագրի մասնագրերը. որոշ կարևոր գործոններ

Գործնականում չափորոշիչները, որոնք պետական պատվիրատուն կարող է կիրառել՝ որոշելու SUՄՀ-ն, պետք է ընտրվեն այնպես, որ համապատասխանեն պայմանագրի պայմաններին: Գնահատման ենթակա բոլոր չափանիշները ը պետք է ունենան իրենց հետ կապված չափորոշիչներ:

Պայմանագրի պայմանների և SUՄՀ որոշելու համար կիրառվելիք չափորոշիչների սահմանումը փոխկապակցված են: Պայմանագրի պայմանները չեն կարող սահմանվել՝ առանց հաշվի առնելու կիրառվելիք չափորոշիչները և ընդհակառակը, կիրառվելիք չափորոշիչները չեն կարող որոշվել առանց պայմանագրի պայմանները հաշվի առնելու:

Երբ օգտագործվում է SUՄՀ չափորոշիչը, ընդհանուր առմամբ, պետական պատվիրատուն կարող է որոշել կիրառել: մասնավորապես հետևյալ ձևերից որևէ մեկով.

- Սահմանել նվազագույն պարտադիր պայմանները, որոնց պետք է բավարարեն հայտերը՝ բավարարում է կամ չի բավարարում սկզբունքի կիրառմամբ գնահատելու դեպքում և հետո միայն միավորներ շնորհել բավարար գնահատված հայտերին: Բալերը կարտացոլեն այն աստիճանը, որով հայտը բավարարում է նվազագույն պայմաններին:
- Սահմանել պայմաններ , ի հավելումն կամ որպես այլընտրանք պարտադիր պայմանների, որոնք չեն առաջացնում նվազագույն շեմի կիրառում և որոնք միավորներ կստանա պետական պատվիրատուի պահանջների հետ հայտի համապատասխանության հիման վրա: Այս դեպքում համապատասխանության մակարդակի հետ կապված որոշակի փոփոխակիությունն ընդունելի է:

Ի՞նչ մեթոդներ կարող են օգտագործվել՝ որոշելու տնտեսապես ամենաշահավետ մրցութային հայտը:

Ընտրված չափորոշիչները կիրառելու մեթոդները կամ մեթոդալոգիաները “համակարգեր են”, որոնք պետական պատվիրատուն կարող է օգտագործել՝ որոշելու տնտեսապես ամենաշահավետ հայտը:

- **Կշռում.** Հրահանգը պահանջում է պետական պատվիրատուից մասնավորեցնել հարաբերական կշիռը, որն այն տալիս է յուրաքանչյուր ընտրված չափորոշիչի՝ սահմանելու համար տնտեսապես ամենաշահավետ հայտը:
Կշռման համակարգի միջոցով պետական պատվիրատուն ծանուցում է մասնակիցներին այն հարաբերական կարևորության մասին, որը նա տալիս է ընտրված յուրաքանչյուր չափորոշիչին, և ինչը մասնակիցներին հնարավորություն է տալիս պատշաճաբար պատշաճ հայտեր: Միաժամանակ, կշռման համակարգի միջոցով պետական պատվիրատուն ձևավորում է իր հայեցողությունը և սահմանափակում է կամայական որոշումների հնարավորությունը հայտերի գնահատման ժամանակ:

Պետական պատվիրատուն կարող է արտահայտել օգտագործված չափորոշիչների հարաբերական կշիռը՝ նախատեսելով “համապատասխան” առավելագույն գնահատումը: Գնահատումը պետք է լինի համապատասխան այն առումով, որ չի կարող լինել այնքան լայն (օրինակ 10%-ի և 90%-ի միջև), որ կհանգեցնի թափանցիկության սկզբունքի խախտման և չի տրամադրի որևէ արժեքավոր ցուցում մասնակիցներին այն իրական հարաբերական կարևորության մասին, որը պետական պատվիրատուն տվել է օգտագործված յուրաքանչյուր չափորոշիչի:

Տնտեսապես ամենաշահավետ հայտը որոշելու համար կիրառվելիք զանազան չափորոշիչների կշռումը պետք է իրականացվի պատշաճ: Ոչ պատշաճ կշռումը կարող է խնդիրներ առաջացնել հայտերի գնահատումն իրականացնելիս և կարող է նշանակել, որ գնի և որակի լավագույն հարաբերակցությունն առաջարկող հայտը չի ընտրվի:

- **Կարևորության նվազող կարգ.** Երբ կշռումն անհնարին է ակնհայտ պատճառներով, պետական պատվիրատուն պետք է մատնանշի կարևորության նվազման կարգով կիրառված չափորոշիչները: Պատճառներից մեկը, թե ինչու կշռումը հնարավոր չէ, պայմանագրի բարդությունն է:

SUՄՇ որոշելու համար կիրառվելիք չափորոշիչների և դրանց նկատմամբ կիրառվող մեթոդների հետ կապված բացահայտման պարտականությունը Պետական պատվիրատուն պետք է հրավերով հայտարարի.

- Տնտեսապես ամենաշահավետ հայտին ներկայացնող չափորոշիչները և
- Դրանց հարաբերական կշիռը կամ նման չափորոշիչների կարևորության նվազող կարգը (եթե պետական պատվիրատուի կարծիքով կշռումն անհնար է):

Բացառությամբ հստակորեն սահմանված նշված բացահայտման պարտականության՝ Հրահանգը հատուկ չի պահանջում պետական պատվիրատուից նախօրոք ձևակերպել գնահատման մանրամասն մեթոդաբանություն: Այնուամենայնիվ, եթե պետական պատվիրատուն նախօրոք ձևակերպել է գնահատման նման մանրամասն մեթոդաբանություն, այս դա պետք է ամբողջապես բացահայտվի մասնակիցներին:

Հրավերը պետք է ապահովի հնարավորինս շատ թափանցիկություն՝ տրամադրելով հստակ տեղեկատվություն, թե ինչպես պետք է իրականացվի գնահատման գործընթացը, մեթոդաբանությունը՝ որը կիրառվելու է տնտեսապես ամենաշահավետ հայտը որոշելու համար: Երբ այն գործոնների մասին, որոնք պետք է հաշվի առնվեն (ներառյալ դրանց հարաբերական կշիռները):

Սա ոչ միայն կօգնի մասնակիցներին պատրաստել շիտեր, որոնք ավելի շատ կհամապատասխանեն պահանջներին, այլ նաև ամբողջ գնման, ներառյալ գնահատման գործընթացը, կդարձնի ավելի թափանցիկ: Այն նաև շահագրգիռ անձանց (մասնավորապես, մասնակիցների, աուդիտի մարմինների և այլ կառավարական մարմինների) հնարավորություն կտա հետևել գործընթացին՝

որոշելու համար այն իրավիճակները, որտեղ գնահատման համար չափորոշիչները կամ մեթոդաբանությունը մշակվել են և/կամ կիրառվել են խտրական ձևով:

Զգուշացում. հայտարարված շնորհման չափորոշիչների փոփոխությունը գնման գործընթացի ընթացքում. Ոչ մի դեպքում շնորհման հայտարարված չափորոշիչները (ներառյալ դրանց հարաբերական կշիռը, կիրառված ցանկացած ենթաչափորոշիչ և դրանց հարաբերական կշիռը և ավելի մանրամասնեցված գնահատման մեթոդաբանությունը որը հայտարարվել էր) չեն կարող փոփոխվել կամ դրանցից չեն կարող հրաժարվել գնահատման գործընթացի ընթացքում: Այս փուլում, դրանք պետք է կիրառվեն ինչպես որ կան:

Կիրառվելիք շնորհման չափորոշիչներին վերաբերող ընդհանուր ռազմավարության սահմանումը. հիմնական կետերի ստուգացուցակ, որոնք պետք է հասցեագրել

Կիրառվելիք շնորհման չափորոշիչներին վերաբերող ընդհանուր ռազմավարությունը պետք է որոշվի մինչև գնման գործընթացը սկսվելը: Ստորև բերված ստուգացուցակը սահմանում է որոշ հիմնական կետեր, որոնք պետական պատվիրատուն կարող է ընտրել երբ սահմանում է իր ընդհանուր ռազմավարությունը.

- Որոշել, թե շնորհման ինչ չափորոշիչ է կիրառվելու. ամենացածր գնի չափորոշիչը, թե SUՄՀ չափորոշիչը, երբ կա ընտրության հնարավորություն:
- Երբ SUՄՀ չափորոշիչն է ընրվել.
 - Որոշել առանձին չափորոշիչները, որոնք կկիրառվեն և դրանց հարաբերական կշիռը (կամ դրանց կարևորության նվազման կարգը այն դեպքում, երբ կշռումը չի կարող կիրառվել ակնհայտ պատճառներով):
 - Երբ որոշվել է բաժանել յուրաքանչյուր չափորոշիչը ենթաչափորոշիչների, որոշել այս ենթաչափորոշիչները և դրանց հարաբերական կշիռը՝ առանձին այդ ամբողջ չափորոշիչին տրված կշռի սահմաններում:
 - Երբ որոշվել է կիրառել ավելի մանրամասնեցված գնահատման մեթոդաբանություն այն սահմանել հստակ:
- Կիրառելի իրավունքի պահանջների համաձայն որոշել՝ երբ և ինչպես հետևյալ տարրերը պետք է բացահայտվեն.
 - ամենացածր գնի չափորոշիչի կամ SUՄՀ չափորոշիչի օգտագործումը՝ ելնելով կոնկրետ դեպքից;
 - Երբ ընտրվել է SUՄՀ չափորոշիչը.
 - առանձին չափորոշիչները, որոնք կկիրառվեն և դրանց հարաբերական կշիռը (կամ դրանց կարևորության նվազման կարգը, եթե կշռումը չի կարող կիրառվել ակնհայտ պատճառներով),

- ցանկացած ենթաչափորոշիչ, որոնց բաժանվել է յուրաքանչյուր կիրառվելիք չափորոշիչ և դրանց հարաբերական կշիռը՝ առանձին այդ ամբողջ չափորոշիչին տրված կշռի սահմաններում
- Գնահատման՝ մշակված ցանկացած մեթոդաբանություն:

Հետագա ընթերցանություն

[SIGMA Public Procurement Training Manual](#)